Մկրտության և հաղորդության մասին ուսմունքներ Վարդապետություն և Ուխտեր 20-ում

Հատված 1. Մկրտության համար առաջադրվող պահանջները

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 20.37 հատվածները՝ փնտրելով, թե ինչ պետք է անի մարդը մկրտության պահանջներին համապատասխանելու համար:

Անհրաժեշտության դեպքում փնտրեք անհասկանալի բառերի սահմանումները Ապա նշեք մկրտության համար առաջադրվող պահանջները ներքևի դաշտում: Դուք կարող եք վերափոխել դրանցից մի քանիսը ձեր խոսքերով:

_____

_____

_____

- Ի՞նչ են այս պահանջներն ուսուցանում Տիրոջ մասին և ձեր վերաբերյալ Նրա ցանկության մասին:
- Ինչո՞ւ է օգտակար հիշել այս պահանջները նույնիսկ մկրտվելուց հետո:

Ընտրեք հատված 37-ում թվարկված պահանջներից երկուսը կամ երեքը: Քննարկեք, թե ինչպես կարող է այդ պահանջներին համապատասխանելու հետևողական ձգտումն օգնել ձեզ ավելի նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Հատված 2. Մկրտությունից հետո առաջադրվող պահանջներ

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.68–69 հատվածները՝ փնտրելով Տիրոջ ակնկալիքները մեր վերաբերյալ մկրտությունից հետո:

- Հատված 69-ից ի՞նչ եք սովորում այն մասին, թե մկրտվելուց հետո մենք ինչպես ենք Տիրոջը ցույց տալիս մեր արժանավորությունը:

Կարող եք նշել «աստվածային քայլերով ու հաղորդակցությամբ» արտահայտությունը հատված 69-ում: Մարդը կարող է ցուցադրել «աստվածային քայլեր և հաղորդակցություն» իր գործերի, վերաբերմունքի և խոսելաձի միջոցով, որոնք ներդաշնակության մեջ են Աստծո հետ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ պատճառներով է Տերը ցանկանում, որ Իր Եկեղեցու անդամները մկրտվելուց հետո ցուցադրեն «աստվածային քայլեր և հաղորդակցություն»:

Քննարկեք առնվազն երեք հատուկ օրինակ, թե ինչպես կարող ենք ցույց տալ «աստվածային քայլեր և հաղորդակցություն» մեր կյանքում: Կարող եք նաև քննարկել օրինակներ, թե ինչպես եք փորձել ցույց տալ դա ձեր կյանքում:

Հատված 3. Ճաշակել հաղորդությունը

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 20.75 հատվածը՝ փնտրելով Տիրոջ հրահանգները հաղորդության արարողության վերաբերյալ:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ մենք ամեն շաբաթ հավաքվենք միասին՝ ճաշակելու հաղորդությունը:

77 և 79 հատվածները պարունակում են այն աղոթքները, որոնք Տերը հրահանգել է քահանայություն կրողներին ասել հաղորդությունը սպասավորելիս: Բացատրեք, որ երբ մենք հաղորդություն ենք ընդունում, մենք նորոգում ենք ուխտը, որը կապել ենք, երբ մկրտվել և հաստատվել ենք: Ձգտելով պահել մեր ուխտերը և ամեն օր ապաշխարել՝ մենք կարող ենք զգալ նույն մաքրագործումն ու օրհնությունները, որ զգացել ենք մկրտության միջոցով:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 20.77 և 79 հատվածները՝ փնտրելով, թե ինչ ենք մենք խոստանում և ինչ է Տերը խոստանում, երբ ճաշակում ենք հաղորդությունը: Կարող եք նշել այդ խոստումները ձեր սուրբ գրություններում:

- Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու մեր պատրաստակամությունը:
- Ի՞նչ եղանակներով մենք կարող ենք ցույց տալ Փրկչին, որ հիշում ենք Իրեն:

Ինչպե՞ս է հաղորդության արարողությունը ցույց տալիս Փրկչի սերն ու ողորմածությունը մեր հանդեպ:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_112-1